

1631ին դարձեալ Պատրիարք եղաւ եւ վեց տարի պաշտօն վարեց։

Յովհ. Խուլ սակայն շատ նշանաւոր անձնաւորութիւն էր՝ հռետոր, աստուածաբան, գրագէտ եւ հեղինակ։ Իր կենսագրութեան մասին ես բաւական տեղեկութիւններ քաղած եմ տպագիր եւ ձեռագիր աղբիւրներէ, որոնք անտես եղած են, եւ որոնցմէ կը տեսնուի նաեւ՝ որ այս Պատրիարքն Կ.Պոլսոյ Հայոց՝ բանիւ եւ գործով հայ կաթողիկէ ապրած, եւ իբր այնպիսի վախճանած է ի Հռոմ։

Յովհ. Վ. Խուլ ծնած է իբր 1554ին ի Կ.Պոլիս։ Հօրն անունն էր Մուրատշա, եւ մօրն՝ Ազնիւ. հոգեւոր մայրն (կնքամայրը) էր Մենենտ Խաթուն (տես «Հանդ. Ամս.» 1892, էջ 214)։ Եկեղեցական աստիճանի բարձրանալու պարագաները, ինչպէս նաեւ մինչեւ 1600 անցուցած իբր կէս դարու կեանքը տակաւին քողով ծածկուած է։ 1632ին գրած իր մէկ ձեռագրէն կ'իմանանք՝ որ ինք եպիսկոպոս էր։

Մելքիսեդեկ կաթողիկոսն Էջմիածնի՝ որ 1599ին ի Կ.Պոլիս Պատրիարքական աթոռը ձեռք բերած էր, ժողովրդենէ մերժուելով՝ 1600ին Էջմիածին մեկնեցաւ, եւ տեղը գրուեցաւ Յովհ. Խուլ Վ., որ հաւանաբար Մելքիսեդէն եպիսկոպոս ձեռնադրուած էր։ Յաջորդ տարին Գ. Վ. կեսարացի, Մելքիսեդի եւ Յովհաննու մշտնջենաւոր հակառակորդը, տապալած է զՅովհ. եւ ինքն մինչեւ 1609 Կ.Պոլսոյ Պատրիարք նստած։ Ծանօթ չէ՝ թէ Յովհ. Խուլ